Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի << Ջրաշենի
Սարգիս Քոլոզյանի անվան
միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

ГНТО Джрашенской средней
школы имени Саргиса Колозяна
Араратского Марза
Респ. Армения

<< 27 >> փետրվարի 2014թ.

ՀՀ Արարատի մարզի մարզպետ
պրն. Ա. Գրիգորյանին

Հարգելի պարոն մարզպետ

Տեղեկացնում եմ Ձեզ, որ <<Ջրաշենի Ս. Քոլոզյանի անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ում կենսաբանության ուսուցչի՝ իր դիմումի համաձայն ազատման պատճառով առաջացել էր կենսաբանության ուսուցչի 12 դասաժամ ծանրաբեռնվածությամբ թափուր տեղ : Հայտարարված մրցույթում հաղթող չճանաչվեց :

Հայտարարվել է նոր մրցույթ, որը տեղի կունենա 2014թ. մարտի 21-ին՝ ժամը 12:00-ին:

Կից ներկայացնում եմ հայտարարության լուսապատճենը:

Տնօրեն՝ /__________/ Երվանդ Գալստյան

1033
28 02 14

# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Ջրաշենի Ս.Քոլոզյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կենսաբանության (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

*1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձեւ 1),*

*2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,*

*3. Անձնագրի պատճենը,*

*4. Ինքնակենսագրություն (Ձեւ 4),*

*5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),*

*6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,*

*7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,*

*8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:*

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ **մարտի 18-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **մարտի 21-ին**՝ ժամը 12:00-ին, Արարատի մարզի Ջրաշենի Ս.Քոլոզյանի անվան միջնակարգ դպրոցում. հասցեն՝ գ. Ջրաշեն, Ս.Քոլոզյան, 4 փողոց: Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 66-75-84 կամ (099) 28-86-31 հեռախոսահամարներով: